

Տարեկան գին 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատուն մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мпакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.



Խմբագրութեանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բ. Ի կիրակի եւ ամեն օրերին).

Յայտարար. Մեր ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարար. Թիֆլիսի համար վճարում են
խմբագրութեանը տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զը-
րոյց. Գաժառ-Քաթիպայի արձանի բացումը.
Հայոց թատրոն. Մասնադասութիւն. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒ-
ՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱՎՆՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Դրամական տագնապ... Այս հեծեմանը է
լսվում ամեն տեղ. Պէտք է կրճատել ծախսերը,
պէտք է խնայող լինել:

Զր գիտեմ ուրիշները ինչպէս են, բայց հայը,
իր ծախսերը կրճատելիս, ամենից առաջ սկը-
սում է մտաւորից—գրգռից, լրագրից, վարժա-
պետից, թատրոնից, Դրամայի աւելորդութիւններ
են, հեշտ են կրճատվում, ոչնչացվում: Կտրել,
դէն գցել. դատարկ գրպանին չէ սաղում ոչ
գիրք, ոչ գրիչ: Փորի պահանջները, առա-
ւօտեանից մինչեւ երեկոյ մագաղիկները վաղ-
վաղ կնոջ պահանջը—արանք ամենավերջիննե-
րն են: Հայը իր հոգին դէն չարտելուց յետոյ
էլ դեռ կպած կը մնայ այդ պահանջին իր
սրտի բոլոր թելերով, իր ամբողջ էութեամբ:
Միայն ծայրայեղ դէպքում, միայն այն ժամա-
նակ, երբ դեռակը կոկորդիս ուկորին կը հասնէ,
նա իր բոլոր ունեցածը կը փոխադրէ կնոջ ա-
նունով եւ այդպէս «կը կրճատէ» իր ծախսերը,
այնուհետեւ ծածուկ ուտելու համար:

Փողի հայրենիք Բագուն տագնապի մէջ է:
Իր առաջին նշանը հայոց թատրոնի խորտա-
կումն էր: Խորտակվեց նա, ճոճաւով, փշուր
փշուր դարձած անդունդը գնաց:
—Ի՞նչ թատրոնի ժամանակ է... Կրկնապար
չէք տեսնու, առում է նաւթային հերոսներին
մէկը:

—Թատրոն... կորէք, կորէք, գործերս վատ
են գնում... Կրճատել, կորէք...
Այսպէս է կանչում մի ուրիշը:

Կրճատելին ծախսերը եւ ամենից առաջ կըր-
ճատվեց հայոց թատրոնի կեանքը, Կրճատվեց
ամեն հասկացողութիւն մտաւորի մասին: Ան-
ցեալ կիրակի եւ առում է իր Բագունից մի
հատ հետադիւր չէ ուղարկվել Գաժառ-Քաթի-
պայի արձանի բացման առթիւ: Հասկանալի
է: Մարդիկ կրճատում են իրաւ են, եւ 1
րուբլիանոց հետադիւր կամ 7 կոպեկանոց նա-
մակը կարող է, գիտէք, ազդել հարկւր տեղից
ճրթճրթացող բնիկի վրա: Սկիզբը դրված է.
Թատրոնի ետեւից, մի եւ նոյն ճանապարհով,
կրթիչ գրքեր, լրագրեր, Միայն մագաղիկներին,
հիւրանոցներին հայրենիքը մնում են եւ կը մը-
նան անմեռ—պարտադիր են, անուրանալի:

—Մենք երես առած ենք, մենք փչացած
ենք, ուրիշ կերպ ապրել չենք կարող: Սովո-
րել ենք...

Սովորութիւն երկրորդ ընտրել են նոյն իսկ
ամենամեծ բարոյագէտները, բոլոր ժամանակ-
ների Բուդդաները, միայն պապանձվել կարող
են այսպիսի բացատրութեան զիմաց:

Բայց երես առածների, փչացածների սովո-
րութիւն չէ միայն գործ տեսնում այստեղ, թատ-
րոնի կործանման մէջ, Բագունից երեւոյրա-
բար ձեռք տուին թիֆլիսցիները: Եկէք միա-
սին անենք, ասացին կովկասեան այդ երկու
խոշոր քաղաքները: Եւ արին: Այսինքն միասին
կործանեցին: Դուք հօ գիտէք, որ հայերը կոր-
ծանման մէջ զարմանալի համեմատելի են: Լաւ
որ այս դէպքում երկու, միմեանցից այնքան
մօտիկ, չորք-քաղաքները միայն գործ տե-
սան: Եւ զարմանում են, թէ ինչպէս է որ այդ
երկուսին չօգնեցին հայկական կործանող ձեռ-
քեր Եւրոպայից կամ Արեւելոյց:

Սա իրողութիւն է, ընթերցող:

Սրկար, երկար քնած էր Թիֆլիսը: Անուշ
ու խոր էր այդ քունը: Կուրը իր միտման
ու վշտից ուրբ քունը էր կարգում նրան, եւ
թէ մի մի անգամ խանգարվում էր այդ քու-

նը, պատճառն այն էր, որ բայցան դարձած
թատրոնում պատրաստվում էին ներկայացնել
այս կամ այն կենդանի մարդուն, բեմ հանել,
ծաղրել ենթարկել անհատի մասնաւոր ընտանե-
կան կեանքը: Բայցանը օրոտում էր, հոգում
եւ ապա, երբ հանգչնում էին ճրագները, ամեն
ինչ դարձնել խորատուգլուկ էր նոյն թանձր,
անվերջ ջրի մէջ...

Այս տարի, զարմանք, Թիֆլիսի ծառերի
վրա թռչունները մի առանձին աշխոյժով, ա-
ռանձին քաղցրութեամբ էին երգում: Զգում
էին այդ փոքրիկ, կենսուրախ փետրաւորները,
որ Թիֆլիսը զարթնում է: Եւ նրանց երգերի
սկիզբն ու վերջը հէնց այդ էր—«Թիֆլիսը
զարթնում է», «Թիֆլիսը զարթնում է»...

Թարմութիւն, կանաչներ, ծառուն երկնա-
յին կապուտակութեան, վարդերի ու անուշ
բուրմունքների այդ աւետարները սխալված
չէին. նրանք քիչ են սխալվում:

Արեւը սկսեց այրել, եւ Թիֆլիսը արթնացաւ:
Վերջնականապէս Կաղմկել է թատրոնական
ընկերակցութիւն: Նա վճռել է մշտական բեմ
պահել: Եւ արտատրոփ լուրեր են թռչում լրա-
գրական սինակներէ, թուում են, կայծեր են
հոսում: Ընկերութիւնը հաւաքվեց: Ընկերու-
թիւնը մտածում է: Ընկերութիւնը գործում է:
Դեռ չէ յոգնել. վերջացնելու վրա է իր մտա-
ծունքները:

Կարողւմ ենք, կարողւմ եւ զարմանում ենք,
հիանում ենք, Ա՛խ, որքան անվերջ երկար
էին ամառայ օրերը: Թիֆլիսի շողերը չէին
միայն, որ անասելի ցանկալի էին դարձնում
սեպտեմբերի գալուտը: Այնպիսի այս ամիսը
սովորականից շատ ցանկալի մի ակնկալութիւն
էր մեզ համար: Մեր թատրոնական ընկերու-
թեան սեպտեմբեր... Ո՛ր, ես, կանչում էինք
յուրիսեան երկար օրերին:

Սպասեցինք, Յորի համբերութիւն ունեցանք:
Եկաւ օրացոյցի սեպտեմբերը: Իսկ թատրոնա-
կան ընկերութեան սեպտեմբեր... չեկաւ:
Կամ աւելի ճիշտ ասած—յետաձգվեց...

Բանից դուրս եկաւ, որ թատրոնական ըն-
կերութիւն Թիֆլիսում կաղմկել է ոչ թէ թատ-
րոնական սեպտեմբերը, այլ... բա-
գունից երեւոյրաբար միայն հայոց թատրոնը տա-
պալելու համար: Զր գիտեմ թէ դուք ինչ ա-
նուն կը տաք այդ ընկերութեան, բայց ես
կանամ ձեզ, որ դա բուն հայկական, ազգային
ընկերութիւն է: Երկրպագ եւ զուգ, Նայեցէք
զիսուր գործին—կործանում:

Եւ ուշադրութեամբ կարդում եւ լսում էին
այն վէճերը, որոնք, բնականաբար, բոլորվեցան
այդ կործանման շուրջը: Եւ իմացայ մի քանի
բաներ:

Նախ այն, որ Թիֆլիսը Բագունի վրա է
դնում մեղքը, իսկ Բագուն կամ լսում է իրեն
կրկնապար մէջ հեծող կամ թէ մի մի մասնաւոր
է անում Թիֆլիսը: Մենք էինք վատ, առում
է, ինչո՞ւ դուք չէիք անում:

Այս վէճը դատարկ է: Երկուսն էլ արել են,
երկուսն էլ իմիջանց օգնել են. «Փառք» էլ
երկուսին է պատկանում, իսկ թէ ինչ չափով,
դա մեզ չէ հետաքրքրում:

Երկրորդ հանգամանքն այն է, որ փոքր
ցոյց է տուել բագունիցներին, թէ պէտք է սան-
ճաւարել մեր դերասաններին: Երեւակայեցէք,
դատարկ ենք կատարելապէս կերելի, քանդել
են բագունիցներին: Այնքան անագին ոռճիկներ
են ստանում, որ նոյն իսկ Բագուն էլ սարսա-
փում է: Զիշտ է, Բայախանիում կատարվելի-
ները տանտեղի հազարներ ոռճիկ են ստանում,
տարբայ վերջում էլ տանտեղի հազարներով
պարգեւ: Բայց հօ նրանք գործ են տեսնում:
Երեւակայեցէք նաեւ, վաղո՞ւ—կաթսաների ան-
վերջ շարաններ նրանց արածն է: Իսկ հայ դե-
րասանը:

—Հօ-հօ-հօ, ծիծաղելի է: Կրճատել, սահ-
մանափակել: Կրկնում է...

Թող ինչ ներքին մեր դերասանները, եւ կա-
սան, որ այստեղ բագունիցները, ինչպէս եւ ամեն
մի հայ, իրաւունք ունենալ Հայ դերասան—եւ
ամբողջ հարկւր բուրմունց բաղկացած ամառ-

կան: Դա անհեթեթութիւն է, դա նոյնքան
վայրենի փաստ է, որքան հայ վարժապետը
առանց պատուված կոչիկների, հայ գրողը ա-
ռանց քաղցի: Եւ մուրաքիւնութեան ի՞նչ է
հայ դերասանը, եթէ ոչ «կամեղիաչի»: Ի՞նչ է
հայ վարժապետը—«խալի» «նօքար», որ պիտի
եկեղեցում տիկացու լինի, դպրոցում—հոգա-
բարձուին կոչիկներ տուող, հարսանիքում երգ
ասող, զուարճացող: Իսկ հայ գրողը, Մալք
կատարելապէս հառաքողական հիմնարկու-
թիւնները, քանի քանի գրողներ կան այնտեղ:
Այն էլ ինչ գրողներ... Մի սպիտակ «աբա»
տուր, եւ նրանցից ամեն մէկը պար կը գայ
առջիւ, ասան անգամ կիջեցնէ, իբրեւ խո-
նարութեան եւ յարգանքի նշան, կոկորդով
զարդարած իր ճակատը:

Ուրեմն...

Երրորդ պատճառը Թիֆլիսում կաղմկած
թէ կաղմկել ընկերութիւնը վճռած է եղել, որ
հարուստները պիտի պահեն հայոց մշտական
բեմ: Վճռել են այդպէս եւ սկսել են կանչել.
«Հարուստ, հարուստ: Թիֆլիսում հարուստներ
շատ կան: Նրանք չեն յսել, չեն եկել եւ ընկե-
րութիւնը շտապով, օգոստոսի տաքերին, վճիռ
է կայացնում. «Փակել խանութը, ոչինչ չի
լինի, սպասենք բարեկալով ժամանակներին»:

Ասելու անելը մի է դառնում: Ահա ինչպէս
է սկսվում կործանումը: Բագունցու համար սա
հօ մանաւայ էր: Նա, որ նաւթերի մէջ շա-
ղախված, մի կոյտ երեխաների տէր մշակի
ամսական հանգիստ խոցով կրճատում է 25
տոկոսով, դրանից աւելի ինչ գեղեցիկ առիթ
կարող էր ունենալ հայ դերասաններ ծախսից
ազատվելու համար:

Թիֆլիսի ձեռնարկողները հարուստների փէ-
ջին են եղել բռնած: Եւ լաւ որ այդ փէջը
սպանած է եղել, դուրս է սահել նրանց ձեռ-
քից:

Մտածեցէք. հայ հարուստը թատրոն պահէ,
գրականութեան օգնէ, մեկնեալ դառնալ: Երազ
է... Եթէ էլ կատարվէր այդ երազը, եթէ է հա-
րուստի ոսկին կար մշտական թատրոնի հիմք
դառնալու, եւ համազօրւած եւ, որ այդ բարու-
թիւնը, այդ ոսկին փուշ կը դառնար եւ մեր
կոկորդում կը մնար:

Թող չասեն թէ ես զրպարտութիւն եմ գը-
րում: Մի ժամանակ մենք ունէինք ընկերու-
թիւններ, ո՞վ էր դրանց պատու: Վերցրէք
հէնց միայն Հրատարակչականը: Ինչո՞վ էր նա
ապրում: Հայ վարժապետի, գործակաւարտի,
արհեստաւորի կոպեկներով եւ ոչ թէ—լաւ
լսեցէք—հարուստի ոսկիներով: Դուք արհա-
մարեցիք ան կոպեկները, յոյս դրիք դեղին
ոսկիների վրա—եւ անա արդիւնք: Յիշում
էք. մի ժամանակ Հրատարակչականի ընդհա-
նուր ժողովը թատրոնում էր լինում, այնքան
շատ էին անդամները: Փանթ հարուստ էիք
տեսնում նրանց մէջ...

Ժողովուրդը իր կոպեկներով գրականու-
թիւն, պարբերական մամուլ է պահպանում.
Ժողովուրդը իր կոպեկներով երկրաշարժից
քանդված մի ամբողջ դաւառ պահեց, նա տա-
լիս է եւ այժմ, կը տայ եւ ապագայում: Ի՞նչ
էր յանկարծ, որ մոռացնել տուեց այդ մեծա-
գործ կոպեկը եւ տարաւ ձեռք խելոց, հաշուով
վաճառակները մօտ, որ ձեռքը, փող ու ապ-
րանք շատ ունի, բայց որի վրա վաղուց է
թել բանաստեղծը:

Հիմա պարզ է թէ ինչը բերեց կործանում:
Եւ անհրաժեշտ է հիշել, ֆանտազիստութիւն: Ամեն ինչ
կար, բացի այս երեք բանից...

Բայց աղքատի վերեւն էլ երկինք կայ: Հայ
դերասանները իրանք միացան, ընկերութիւն
կաղմկեցին եւ ներկայացումներ են տալիս: Եւ
շատ լաւ են անում: Քիչ կանեն, իրանք կա-
նեն: Հայկական թատրոնը չի մեռնի: Այս բանը
մոռացել էին Բագուն ու Թիֆլիսը: Վախեցին
որ ամեն մէկը կարող է 5—10 ռուբլի վնաս
կրել: Հայ դերասանները չեն վախենում դրա-
նից: Նրանք աւելի ծանր վնասներ կը կրեն
իրանց ուտելի վրա...

Բայց փոխարէնը որպիսի ծառայութիւն

իրանց ազգին եւ լեզուին: Սովորեցէք, մի քիչ
էլ դուք սովորեցէք, պ. պ. ղեկավարներ եւ
կազմակերպողներ...

Լ.

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Մենք ստացանք մեր հոշակաւոր Հ. Դ. Ա-
րշակից Գաժառ-Քաթիպայի արձանի բացման
առիթով հետեւեալ նամակը.

«Բանասէր պարոն.

«Լի գոհութեամբ օրտի շնորհաւորեմ
ձեր հանդէս, որ է երախտագէտ ճանաչումն
եւ յարգութիւն առ այնպիսի ծաղկեալ հան-
ճար՝ որպիսի էր անմոռանալի Ռաֆ. Պատկա-
նեանի: Այդ արձան յաւէտ ներկայ եւ ապա-
գայ երիտասարդ հայրենակցացդ պիտի ազդէ
այդ հեղինակին նման ջանալ մշակել զմիտս եւ
զլեզու. միանգամայն եւ ձեզ շնորհապարտ ըլ-
լալ՝ որ կանխեցիք այդ յիշատակարանով կանգ-
նել զնա յօրինակ եւ յօրհնութիւն, զոր եւ ես
իմ յափովս ընծայեմ յօրհնութեամբ, մաղթե-
լով քեզ եւ գործակցացդ յաջողութիւն կենաց
եւ գործոց:

Աղօթարար Ժ. Ղեւոնդ Մ. Ալիշան

Թիֆլիսից ստացանք երկու հետագիրներ.

«Երեսուն տարին հոգում մէջ հնչում է
Գաժառ-Քաթիպայի մուտան. խոնարհվում եմ
արձանի առաջ եւ սրտագին շնորհակալութիւն
եմ յայտնում ձեզ ձեր եռանդուն աշխատանքի
համար:

Ալեքսանդր Աբելեան

«Այժմ, երբ ամբողջ Գաժառ-Քաթիպայի
գերեզմանի վրա արձանը կանգնած է, մենք
մեր քաղցր պարտականութիւնը համարում
ենք յայտնել մեր անկեղծ շնորհակալութիւնը
ձեզ, այդ գեղեցիկ գործի ձեռնարկին: Օրհնվի
յիշատակը անմահ բանաստեղծի: Նրա քեռաղ-
չիկները՝ Նիկոլայեթ Պատկանեան եւ Յուլիա
Սպենդիարեան. Յովհաննէս Սպենդիարեան

Պ. Անդրեան Տէր-Մարութեան մեկնեց Երե-
ւան: Նա տանում է իր հետ Մօսկվայի հայերի
գեղեցիկ արծաթեայ պսակը, որը պէտք է
յանձնէ էջմիածնի թանգարանին:

Գր. Չալսուչեան

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

«Այսպէս-Քաթիպայ», դրամ 4 գործ: Արտակալ ղեկը
Հայաստանի-ից փոխադրեց Ա. Մարգարեան-Արշա-
տեան: Առաջ ու Եւրոպայի 2 գործ. Նախկին

Մեր ամառ վրայասանի նշանաւոր գրվածքը
թատրոնական իրարմից որոշ տեսակետներից
գուցէ մի գնահատելի ձեռնարկութիւն համար-
վի: Շատերի համար Գաժառ-Քաթիպայի հերոսը
վրա անկապած աւելի կենդանի, աւելի պատ-
տիք, հետեւաբար աւելի ողբերիչ եւ յափը-
տակիչ է: Բայց բուն դրամատիքական արուես-
տի տեսակետից այդ նոյն ձեռնարկութիւնը
դարձաւ գնահատելի համարել—մեզ վի-
ճելի է թուում: Առհասարակ որ եւ է վրայա-
սանական գրուածք դրամատիքական փոխա-
դրելու գլխաւոր անպարտութիւններից մէկը
հէնց տեխնիքական դժուարութիւնն է: Ժողո-
վրդական վէպերի նկատմամբ այս դժուարու-
թիւնը գուցէ երբեմն այնքան էլ բարդ չը
լիտի, բայց միանգամայն հարթվել—յամենայն
դէպս չէ կարող: Յայտնի է, որ վէպն առհա-
սարակ լինում է ընդարձակ, ծաւալված, եր-
բեմն մանրակրկիտ կերպով երկարաբանված,
այն-ինչ դրամայի առանձնայատկութիւնն է՝
լինել հակիրճ, սղմված, կտրուկ, բայց պատ-
ճառաբանված: Ահա փոխադրողները, որքան էլ
ի նկատի ունենան դրամայի այս արտաքին
առանձնայատկութիւնը, որքան ձգտեն հետե-
ւողական լինել, յարմարվել նրան՝ երբեմն վի-
պասանական արուեստի հետքերն այնու ամե-
նայնիւ անջնշել են մնում: Բայց այս արտա-
քին, տեխնիքական դժուարութիւնից կան ի
հարկէ նաեւ ներքին, հոգեբանական դժուա-
րութիւններ, որոնց վրա երկար կանգ առնել
առայտ մեր նպատակից դուրս է. բայց աւե-

լորդ չենք համարում մատնանիլ անել միայն մի հանգամանքի վրա, որ մասամբ վերադարձնող զինվորական անմիջական արմատն է. դա այն է, որ վեպի մէջ հերոսները եթէ ոչ նոր ստեղծվում, շատ անգամ սակայն երեւան են դալիս իրանց, այսպէս ասած, օտարմանքով, սկզբնական դրութեամբ եւ կազմակերպվում են հենց ընթերցողի առջև. մինչդեռ դրամա-յում հերոսը սովորաբար համարեա արդէն կազմակերպված է ինքուստ եւ գործողութեան ընթացքում իր ճակատագրին է դարձնուած:

Պ. Սարգսիան Արմենիի վեպի որոշ առանձնայատկութիւններ, մասնաւորապէս նրա ժողովրդականութեան շնորհիւ՝ իրեն փոխադրող որքան էլ բարեյայտող հանգամանքներում գտնվելը՝ այնու ամենայնիւ իր գործը գերծ չէ մեր մատնացոյց արած պակասութիւնները: Այս պակասութիւնը նա ըստ երեւոյթին կարծէք փորձում է ուրիշ կերպ հարթել—էֆֆէկտի, տպաւորութիւն գործելու ազդու միջոցների է դիմում. բայց իդուր, սրանով ընդհակառակն պակասութիւնն աւելի ակնյայտի է դառնում:

Դրամայի բովանդակութեան վրա կանգ առնել բոլորովին աւելորդ ենք համարում, որովհետեւ տրամադրի ենք հաւատարմ, որ դա մեր ընթերցողներին աւելի մանրամասն արդէն անմոռաց Արմենիի «Վէրք Հայաստանի»-ից է յայտնի:

Պ. Արմենիի թէ իր խաղով եւ թէ յարմար արտաքինով գոյի մեծնայտող Արմենի-Բա-լասին է. նրա խաղը շատ կենդանի էր եւ բուն ծափահարութեան արժանացաւ, մասնաւորապէս առաջին եւ երրորդ գործողութիւնների մէջ: Պարտի խաղն աւելի ազդու կը լինէր, եթէ իր դերը լաւ խմանար. նկատելի էր, որ երբեմն խաղած կերպով է հեռեւում յուշարարին—մի հանգամանք, որ խաղի իլլուզիան, տպաւորութիւնը բաւականին նուազեցնում է: Պ. Ստեփանեանը տանուտէր Օհանի դերը նոյնպէս լաւ տարաւ. իսկ պ. պ. Զարիֆեանի Սահակ աղան, Մելիք-Յովսէփեանի Աւետիք ամին, ինչպէս եւ պ. Աւետեանի զգիլ Կոստանը շատ բնորոշ էին եւ մեզ վրա լաւ տպաւորութիւն թողին: Այսինքն ընկնում նաեւ տիկին Փառանձեմ եւ տիկին Աւետեան. առաջինը կատարում էր Ստեփանեանի, իսկ երկրորդը Նազուրի դերը: Պ. Ալիսանեանը Մուսայի դերում վատ չէր: Գալով պ. Վրոյրի Հասան խանին՝ պէտք է նկատել, որ պարենը իր դիմագծերով, մասնաւորապէս աչքերի արտայայտութեամբ բարբա-րոս խանի էութիւնը շատ լաւ գիտէր պատկերացնել. մեր կարծիքով մի բան միայն պակասում էր. նա պէտք է լինէր աւելի խորիւստ, աւելի գոռոզ եւ յանդուգն: Արմենի-Բալասինի ձեռքն ընկնելիս նա ցոյց տուց իր արեւելեան տիպիկական վարկածութիւնը. իսկ դրանից առաջ ահարկու խանի գոռոզութիւնն, ինչպէս ասացինք, այնքան էլ նկատելի չէր:

Եսկիւզի վրա զգուշորէն այնքան էլ բովանդակալից չէ: Գիւղացի Պիէրը իր առօրեայ ապրուստի աշխատանքից ձանձրացած իր կին Ժանէտայի հետ օկում է հարուստ կեանքի երջանկութիւնները երազել. Ժանէտան էլ, ի հարկէ, իր եղանակովն է երազում: Բայց երազը կարծես յանկարծ իրականութեան է փոխվում: Կոմս դը Մորէն անցնում է պատահաբար երազող զոյգի մօտից, նրանց առաջը կտրում է եւ հրահրում իր ամբողջ Գիւղացի ամուսիններին թողնելով իր չքեղ զանիւծը՝ կոմսը մի պայման է դնում եւ հեռանում է երեք ժամով. պայմանը կայանում է նրանում, որ երկու հիւրերը ամեն ինչ կա-րող են ուտել եւ չօգտվել միայն մի ծաղկա-ման պէտք է հանգիստ թողնեն, եւ եթէ մինչ-չեւ իր վերադարձը ծաղկամանին ձեռք չեն տուել՝ այն ժամանակ խոտանում է իր ամբողջ ամբողջը նրանց տալ: Բայց Եսկիւ թե-րունդի անհամբեր ներկայացուցիչը հրաժար-վելով դանիւնում պատրաստ դրված համեղ ուտելիքներից եւ խմիչքներից՝ իր աչքը շա-րունակ արգելած ծաղկամանին է յարել: Նա փայլում է կանացի խորամանկութեան եւ թուրութեան բոլոր նշաններով եւ վերջապէս ուշաթափ ձեւանալով՝ հարկադրում է իր ա-մուսնուն ձեռք տալ ծաղկամանին, եւ, ոչ բարդ, «ծաղիկը» թեւ առած թողում է: Կոմսը իսկույն ներս է մտնում, տեղեկանում է իրո-ղութեան մասին եւ հիւրերին նորից ուղար-կում է իրանց խրճիթը. իսկ այս պայմանա-զանցութիւնից կոմսը այն եղբայրացութեան է դալիս, որ մարդիկ սովորաբար անյաջ են, չեն սիրում միայն եղածով բաւականանալ:

Ինչպէս յայտնի է՝ իմաստուն եղբայրացու-թիւններով էին վերջանում շատ անգամ հին յունական ողբերգութիւնները: Այս սովորու-

թիւնը ինչքան էլ մեզ տարօրինակ թւի այժմ, այնու ամենայնիւ հասկանալի է: Բայց մի նոր վոդեվիլի մէջ այդ նոյն սովորութիւնը աւելի քան տարօրինակ է—անտեղի է:

Աւետեան ամուսինները Պիէրի եւ Ժանէ-տայի դերը շատ լաւ խաղացին: Տիկինը Ժա-նէտայի կոկետութեան եւ անհամբերութեան վարկանքները աշողութեամբ էր արտայայ-տում. իսկ պարոնը միամիտ գիւղացի Պիէրի դերը շատ կենդանի կերպով խաղաց: Կոմսի դերը կատարում էր պ. Աղայեանը:

Թատրոնում դժբաղդաբար դարձեալ քիչ հասարակութիւն կար:

Վ. Նալբանդեան

Մ Ա Տ Ե Ն Ա Պ Ի Ռ Ի Թ Ի Ե Ն

Վահան Թէքեան. «Հոգեք». 113 էր. Պարիզ, 1901 թ.

Մեռելատունը միշտ լինել է ինքուստ սգաւոր-ներով, եւ զարմանալի չէ, որ մի քանի տաս-նեակ տարիներից ի վեր գեղարուեստը սեւա-ւորվել է Արեւմտեան Եւրոպայում, մի քանի տերունիների վարդապետ երազների, յոյների եւ ինչների այդ ահագին մեռելատան մէջ:

Սակայն ամեն մեռելատան լինում են նաեւ օտար լալկաններ, որոնք միմիայն չինձու ար-ցունքներ ունեն ուրիշի սուգի համար, եւ այդ-պիսի լալկաններ են հայ ղեկաղէնները:

Այդ լալկանների թիւին է պատկանում նաեւ «Հոգեքի» հեղինակը, որ, օտար, թուով է ինձ ամենաշնորհալիս այն հայ ղեկաղէնների մէջ, որոնց գրութեանցում եւ առիթ եւ ունե-ցել կարողաւ:

«Հոգեքի»-ի մէջ, ինչպէս առհասարակ դե-կաղէնական գրութեանցում, շատ տեղեր կան՝ անհասկանալի առողջ գաղափարների եւ առողջ գեղարուեստի համար, բայց այն հա-զուադէպ բանաստեղծութիւնները, ուր հեղի-նակը չէ բնագրային իր զգացմունքը, երեւա-կալութիւնն ու լեզուն, եւ այն հատկանշանքը, որոնք իր օտարների պատահում են նրա բո-լոր բանաստեղծութիւնների մէջ, աչքի են ընկ-նում սիրուն ու արտայայտիչ ոտանաւորով, շնորհալի ու սահուն արձակ ձեւով, ինքնատիպ ու գեղեցիկ համեմատութիւններով, գոգարիկ նկարագրութիւններով, որոնք պատկերներ են զարթեցնում ընթերցողի մէջ, եւ տխուր տրա-մագրութիւններով, որոնք վարակում են մար-դուս, ինչպէս սուգը մի կնոջ, որ օտար դա-գաղի վրա իր հին մեռելին է ողբում:

II

«Женщина по Исламу и в. Ислам». Ахмедъ-Бекъ Агаева. 59 стр. п. 30 коп. Тифлисъ, 1901 г.

Պ. Աղայեանի գրքովը՝ «Կինը ըստ Իսլամի եւ Իսլամի մէջ», որ, եթէ չենք սխալվում, ար-տատպւում է «Кавказский Вестник» ամսագ-րին, ներկայացնում է մի շատ հետաքրքրա-կան մենագրութիւն (մոնօգրաֆիա) մահմեդա-կան կնոջ դրութեան մասին:

Պ. Աղայեանի ֆէմինիստ է եւ մահմեդական աշխարհի բոլոր ցաւերին երկու գլխաւոր դար-ման է տեսնում—մահմեդական կնոջ ազա-տագրութիւնը եւ մահմեդական այրուբների բա-րեփոխութիւնը:

Ինչ վերաբերում է մահմեդական կնոջ ա-զատագրութեան, պ. Աղայեանը Ղուրանից բերած վկայութիւններով եւ բազմաթիւ պատմական ժամանակով ապացուցանում է, որ Իսլամը, ինքն ըստ ինքեան, դէպ չէ կնոջ ազատ իրաւունք-ներին, եւ որ հարեմական կեանքը եւ առհա-սարակ մուսուլմաններին այժմեան օտարկա-կան վիճակը հետեւանք են Իսլամի ազաւա-ղութեան, որ տեղի է ունեցել պարսկական եւ սիրիական բարձրի ազդեցութեան տակ, այն-պէս ինչպէս իսկիւրիթեան եւ այլն հետեւանք էին քրիստոնէական կրօնի միջնադարեան ա-ղաւաղման:

«Մահմեդական աշխարհը օթեփնցնելու հա-մար, նրան քաղաքակրթ ազգերի չըջանը մտցնելու համար,—վերջանում է հեղինակը,—անհրաժեշտ է մի ուժեղ ցնցում. անհրաժեշտ է, որ մահմեդականներն էլ ունենան իրանց բէֆօրմացիայի չըջանը, որ նրանց մէջից էլ դուրս գայ անկուն կաթիլ եւ անտանձն անձնութիւններ մի մարդ: Աղայեանի բէֆօր-մատումը նոյն իսկ Իսլամի, նրա պատմութեան եւ աւաղութիւնների մէջ, կը գտնի անշուշտ բարենպաստ հող»:

Ինչպէս տեսնում էք, պ. Աղայեան, ուսնաց առածի նման, «Взять быка за рога»:

S. Թ.

Նոր աստղած հրատարակութիւններ. 1) Г. Ва-пцатъ. «Армянские цыганы». 2) М. С. Бетановъ. «О Кавказскомъ Опыте». (Къ Кавказской Юбилей-ной выставке). II, 30 է. Тифлисъ. 1901 г.

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 2-ին
Ձեր լրագրի № 214-ում տպւած «Փոքրիկ նկատողութիւններ» յօդուածում ի միջի այլոց յիշված էր եւ այն դերասանների մասին, որ-ոնք չեն մասնակցում «Կանոնաւոր խմբի» ներկայացումներին:

Որ մենք մեր սեպտեմբերի 22-ի ներկայա-ցումով չենք կամեցել խանգարել կանոնաւոր խմբի ներկայացմանը—այդ շատ պարզ է, ո-րովհետեւ մեր ներկայացումը հենց սկզբից նշանակված էր այդ օրը:

Այժմ մի հարց: Միթէ ներկայացման իրա-ւունքը վերապահված է միմիայն կանոնա-ւոր (?) խմբին, միթէ գեղարուեստը կարող է համարվել սեփականութիւն մի խումբ անձ-նաւորութիւնների. միթէ դուրս մնացած դե-րասանները պէտք է օղով կերակրվեն:

Ի դիմաց խմբի դերասան Ամօ

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուրբաթ, սեպտեմբերի 5-ին, կովկասեան ցուցահանդէսում տեղի ունեցաւ թոնապահա-կան բաժնի բացումը:

Մեզ խնդրում են հաղորդել, որ կաթնա-տնտեսական ժողովի այսօրվայ նիստը պէտք է տեղի ունենայ ցերեկվայ ժամի 12-ին Կով-կասեան Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում:

Ուրբաթ, հոկտեմբերի 5-ին, տեղի ունեցաւ կովկասեան բժիշկների համագումարի 5-րդ նիստը, որ նւերված էր բժիշկների Գոպաձէի եւ Բաբայեանի զեկուցումներին: Բժ. Գոպա-ձէի զեկուցման նիւթը Արաօթուածն էր, որը քննվեց զեկուցանողի կողմից որպէս ջրա-բուժական կայարան: Բաբայեան իր զե-կուցման մէջ յայտնեց այն միտքը, թէ ժամա-նակ է, որ կառավարչական հսկողութիւն հա-տատով Թիֆլիսի շրջանի հանձնային ջրերի վրա: Ի միջի այլոց, զեկուցանողը խօսեց Թիֆլիսի ծծմարային տաք աղբիւրների մասին, որոնք քաղաքի համար ահագին նշանակու-թիւն ունեն: Համաժողովը, համաձայն լինելով զեկուցանողի կարծիքին, որոշեց միջնորդու-թիւն յարուցանել կառավարութեան առաջ, որ նա իր պաշտպանութեան տակ առնէ Թիֆլիսի շրջանի հանձնային ջրերը:

Մեզ խնդրում են հաղորդել, որ այսօրվանից Թիֆլիսի Աւստրալիական ժողովրդական թատրո-նում, հայկական բաժնի անդամների նախա-ձեռնութեամբ, բացվում է ձմեռային թատրո-նական շնորհ: Առաջին անգամ խումբը կը խաղայ Ծաղաբէլու «Պաննու» պիեսը: Պաննու-մի դերը կը կատարէ օր. Վարդուհի: Ներկա-յացումն սկսվելու է առաւօտեան ուղիղ ժա-մի 11-ին:

Երէկ, հոկտեմբերի 6-ին, ցերեկվայ ժամի 1-ին, տեղի ունեցաւ պողաբոյժների համա-ժողովի վերջին նիստը եւ նրա փակումը: Նիստի ժամանակ յայտնվեցին այն պարզե-կանքները, որ տուած են զանազան անձերի համա-ժողովի կողմից:

Պետերբուրգի լրագրները հաղորդում են, թէ այնտեղ յամառութեամբ լուրեր են պտ-տում, որ կարճ ժամանակից յետոյ Պետեր-բուրգ կը հասնի Թիւրքական մի արտակարգ ղեկապետութիւն, որի գլուխ կանգնած կը լինի Թիւրքիայի զինուորական բարձրագոյն ան-ձերից մէկը:

Ուրբաթ, հոկտեմբերի 5-ին, կաթնատնտե-ական ժողովում կարգադրեցին զեկուցումներ Ե. Կանցիլմախի բժ. Կովկասեան մագնո-կենդանիների մասին, Ս. Քալանթարի կովկասեան կաթնատու կենդանիների տեսակ-ները մասին եւ Ս. Արզումանյանի՝ իր արած տնտեսական փորձերի եւ դիտողութիւնների մասին: Ժողովականները ծանօթանալով Կով-կասում եղած կենդանիների տեսակներին եւ նրանց արդիւնաբերութեան, այլ եւ այն պայմանների հետ, որոնցով նրանք չըջապա-ված են, եկան այն եզրակացութեան, որ Կով-կասում պէտք է բարեօրէյն անասնապահու-թիւնը գլխաւորապէս տեղական տեսակի ա-նասուններով, որոնք աւելի ընտելացել են տեղական պայմաններին եւ աւելի քիչ են վնասուած հիւանդութիւններից, իսկ արտա-սանանան տեսակի անասուններ մտցնել այն կարողութեան, ուր բարեօրէյն են անա-սուններին կերակրելու եւ խնամելու եղանակ-ները: Նիստին ներկայ էին 45 անձ:

Հոկտեմբերի 5-ին երկրագործութեան եւ պետական կարուածների միւսնաբոլորութիւնը տե-ղեկութիւն տուեց Կովկասեան Գիւղատնտե-ական ընկերութիւնից, թէ միւսնաբոյժների խոր-հրդի որոշման համաձայն՝ տեղի ժամեցաւ Բարձրագոյն հրաման, որով, իրեն ժամանա-կաւոր միջոց, մինչեւ 1903 թ-ի ղեկոսման 18-ը, թոյլ է տրվում առանց մաքսի արտա-սանանից բերել տալ զանազան ապագարա-տներ եւ գործիքներ՝ գիւղատնտեսութեան հա-մար վնասակար կենդանիներին եւ միջատնե-րին ոչնչացնելու նպատակով: Սրա հետ միու-մին միւսնաբոլորութիւնը խնդրում է Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնից հաղորդել, թէ որ ապագարատներն եւ գործիքները ցան-կայի է մտցնել այն ցանկի մէջ, որ արդէն կազմվում է երկրագործական ղէկաւորումն-տուած:

ԼՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Դիվիլու ու-տիկանական բաժնի պրիստաւ Կոնիլեֆոկի, տեղեկութիւն ստանալով, որ երկու աւաղակ պատագարվել են Կովկասի գիւղում մի տան մէջ, սեպտեմբերի 15-ին վերջում է իր կո-ղակների խումբը եւ ձանապարհվում այնտեղ, ուր երկու դիմադրութեան հանդիպուեց յե-տոյ՝ վերջապէս աշողվում է կալանաւորել ա-ւաղակներին: Դրանք տաժանակիր աշխա-տանքների տեղից փախած՝ Մուղանլու գիւ-ղացի Մամէդ-Նար-Իման-Վէրդի-օղլին եւ Բա-ղուի գաւառի Սահագ-Պիգի գիւղացի Սաֆար-Ալին էին: Նրանք օտարապիւր չարագործու-թիւններ են կատարել այստեղ: Մամէդ-Նարը բռնաբարել է Մարգի անունով մի կնոջ, իսկ մի այլ կնոջ սպանել է. նոյնպէս սպանել է մի ուղաւաղների եւ այլ շատ չարագործու-թիւններ է կատարել երկու ժամանակվայ ընթացքում Ղուրայի, Բագուի եւ Շամախու գաւառներում: Գործերը Դիվիլու քննիչի մօտ են, որը բանասիրեց նրանց անմիջապէս Գա-ւառը հիմա աւաղակներից ազատվում է, եւ երեւի միանգամայն բոլորովին կազատվի, չը-նորհի: Այն եւսանողը միջոցներով, որ ձեռնար-կել է մեր գործունեայ գաւառապետ պ. Դի-մենսիկի: Ապառնեք եւ ցանկանեք կատարեալ աշողութիւն»:

ԿԱՐՄԻՐ-ԱՂՅԻՐ գիւղացի (Ղազարի գա-ւառ) մեզ հաղորդում են. «Վերջին անձրեւ-ները շատ աներ, գոմեր փլցրին մեր գիւղում, ինչպէս նաեւ չըջակայ գիւղերում: Ամեն տեղ ապրանք շատ է մնացել աւել, իսկ Նորչին գիւղում երկու երեխաների դիակներ են հանել փլված պատի տակից»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Daily Mail» լրագրին հետագրում են, թէ ներքին պատերազմը Աւստրալիայում անխու-սափելի է համարվում, չը նայելով որ Խաբի-բուլլային աղովից, ըստ երեւոյթին, խաղաղու-թեամբ բարձրանալ իր հօր գահը: Ռուսաց կա-ռավարչական չըջաններում,—անգլիական լրա-գրի տեղեկութիւններով,—հաւատացնում են, թէ Խաբիբուլլային Աւստրալիայում չեն սի-րում ոչ ժողովուրդը, ոչ իշխանները: Կարծում են, որ Ռուսաստանը հանդէս կը բերէ իր թիկնածուին, Արշուրանանի կրտսեր որ-դուն, Մուհամմէդ-Օմար-խանին, որին շատ համակրում են իշխաններն եւ ժողովուրդը: Յօգուտ Արշուրանանի կրտսեր որդու շատ է աշխատում նրա մայրը, եւ ընդհարումը երկու թիկնածուների մէջ, ըստ երեւոյթին, անխու-սափելի է: «Այսու ամենայնիւ,—ասում է «Daily Mail»,—եթէ Անգլիան չէզոք պահէ իրան այս ներքին երկպառակութիւնների մէջ՝ Ռուսա-ստանը լոկ դիտողի դերից չի դուրս գալ: Բայց հենց որ Անգլիան որ եւ է քայլ անէ արեւելեան Աւստրալիայում, որով պարզվի բրիտանական կառավարութեան դիտաւորութիւնը խախտե-լու իր չէզոք դիրքը՝ Ռուսաստանը անմիջա-պէս ձեռնամուխ կը լինի գործնական քաղա-քականութեան Աւստրալիայի արեւմուտքում: «Daily Mail» աւելցնում է, իբր թէ ռուսաց սանձաւանագա խմբերի կազմը Միջին Ասիայում նշանուոր չափով ուժեղացրած է: Աւստրալի-այի բոլոր կողմերից զօրքեր են գնում ղէպի կառուց:

Գերմանական ժողովրդական կուսակցու-թեան ժողովում, որ գումարվեց Բադեն-Բադեն-ում (Աւստրիայում), ղօկտօր Ցանգերի մի փայլուն ձեռն արտասանեց՝ ֆրանսիական կրօ-նական միաբանութիւնների անդամներին եւ մասնաւորապէս եղութներին Աւստրիայում ընդունելու դէմ: «Նրանք,—ասաց ղօկտօր Ցանգերը,—մեր ամենագարհուրելի թշնամիներն են: Հոգիւ իւրաքանչիւր որ մեզ մի որ եւ է տանջանք է պատճառել եւ շարունակում է հասցնել հազարաւոր նոր եւ նոր վերքեր... Հենրիխ IV եւ Յովսէփ II, նրանց չնորհիւ:

գիրքերի տարածած լուրերը, որոնք նպատակ ունեն աղաւաղել թագաւոր Կայսրի Ֆրանսիան այցելելու նշանակութիւնը, ցոյց տալով իբր թէ այդ այցելութեան նպատակն է եղել նախապատրաստել մի նոր ուսական փոխառութիւն Ֆրանսիայում: Ֆրանսիաների միմեկորդը յայտարարում է, որ ոչ նորին Մեծութեան ճանապարհորդութեան ժամանակ եւ ոչ նրանից յետոյ ոչ մի խօսք չէ եղել որ եւ է փոխառութեան մասին:

Ջրային եւ խնոցային հաղորդակցութիւնների վարչութիւնը հաղորդում է հետեւեալը իբրեւ պատասխան լրագրութեան մէջ երեւցած յուզող անգիտութեան այն դժուար պայմանների մասին, որոնց մէջ ընկած է ներկայումս Վոլգայի նաւագնացութիւնը: Վոլգայի ծանծաղանալու պատճառով, Վոլգայի նաւագնացութիւնը վերացնելու համար ձեռք առնված միջոցները թոյլ են տալիս յուսալ, թէ նաւերը հերթով անցկացնելու համար հաստատված կանոնները ճիշդ եւ անշեղ գործադրելու դէպքում՝ նաւերի կուտակված խոցումը անարգել կանցնի Լորէիկինի անցքով՝ դեռ գետը ստոյնելուց առաջ, եթէ միայն, ի հարկէ, բացառիկ կանոնի ցրտեր չը լինեն, որովհետեւ, ինչպէս երեւում է 24 տարեկան ընթացքում ունեցած անգիտութիւններից, Վոլգայի Բիբիսիկի եւ Կազանի մէջ տառաւորով ծածկվում է մեծ մասամբ հոկտեմբերի երկրորդ կեսին:

Հակաժամադրութեան մասնագործի կողմից յայտարարվում է, թէ հոկտեմբերի 3-ից սկսած նէպալով քաղաքը ժամանաւոր կողմից անվտանգ է համարվում:

Հոկտեմբերի 4-ին թագաւորանդ Մեծ Իշխանը ժամանեց Սպալա: Նոյա Մեծութեան ներք թագաւոր Կայսրը եւ թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնա, պրուսական Հէնրիխ իշխանի եւ Իրէնա իշխանուհու հետ բարեհաճեցին դիմաւորել Նորա Բարձրութեանը Օլեն կայսրանուհու:

ՄԱՆԻԼԼԱ: Հինգ հարիւր քուէրօսներ յարձակվեցին 46 հոգուց բաղկացած ամերիկական հետեւակ զորախմբի վրա, Սամար նահանգում Բոնգալանում, Բոնգալա գետի մօտ: Ամերիկացիները կորցրին 10 մարդ սպանված եւ 6 վիրավորված: զորախմբի միւս մասը ժամանակին վրա հասաւ՝ ամերիկացիների կորուստի առաջին առնելու համար: Այնուհետեւ քուէրօսները յետ մղեցին, աւելի քան հարիւր սպանվածներ թողնելով: Բայց կարծում են, թէ ներքանց յետ նահանջեցին՝ միայն օգնութիւն ստանալու նպատակով: Երբ այս լուրը հասաւ Կատրայօնգան՝ անմիջապէս անցքի տեղն ուղարկեցին երկու թնդանօթածիգ նաւեր, նոյն տեղն ուղեւորվելու եւ գնահատել Սմիտ:

ԿԻՍԿՈՎ: Վրացալի հեղինակ Միխայիլ Բալուցիկի անձնապատկերներն զործեց:

ԽճճԱԳԻՐ՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱՅ ՄԷԼԻԳԱԼԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԳԱԼԱԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի յայտնելու ի գիտութիւն ընդհանուրի, որ կուպօններով եւ Թիֆլիսի քաղաքի 3-դ փոխառութեան տիրած դուրս եկած օր-լրացրեցիների համար փողերի տալը կը կատարվի, համաձայն վերոյիշեալ փոխառութեան բաց թողնելու պայմանների §6-ի, բացառապէս Վարչութեան կասսայում 9-ից մինչեւ 1 ժամը ցերեկվայ:

ԵՐԿՐԱՅԱԳ-ԻՆՃԵՆԻՐ Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (НИВЕЛИРОВАЧНАЯ) եւ այլ տեսակ գեօդէզիական աշխատութիւններ՝ ջուր մասալարարելու, կանաչիգայի, օռոգման, ճահիճների ցանաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածների կարգաւորութեան յատակագծի վրա զբաղակցող (ОДНОЧОВНИЙ СБОРЪ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի օրոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնսդրական կարգով եւ այլն:

ԲԱԳՈՒ, Վերօրոգայա Նոմէրներ հիւրանոց, կամ Թիֆլիս՝ Ավանիւն փողոց, Շահրուազանի տուն, № 59, բաւկում:

9—100

Այսօր, ամսիս 7-ին, ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ՉՄԵՌՆԱՅԻՆ ԴԱՀ.

ԿՕՆՑԵՐՏ

Տ Ե Ն Օ Ր ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆԻ (Խաղիլայից) Մասնակցութեամբ օր. Գասիկ (սօպրանո), պ. Բրօշի (բարիտոն) եւ պ. Գորբոսովի (վիօլոնչիկա): Սկիզբն է 8 1/2 ժամին

Տոմասները ծախվում են ժողովարանում: 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Աւագների խորհուրդը խոնարհաբար խնդրում է պ. պ. անդամներին չնորձ բերել ընդհանուր ժողովի, հոկտեմբերի 15-ին, երեկոյան ժամի 10-ին, չը կայացած ժողովի փոխարէն, որ նշանակված էր սեպտեմբերի 30-ին: (7 եւ 14) 1—2

Կ Ր Թ Վ Ա Մ

ՇՎԷՑՏԱՐԱՅԻՖՐԱՆՍՈՒՀԻ

ցանկանում է դատարարակուհու (Губернанта) տեղ ունենալ մի ինտելիգենտ ընտանիքում: Դիմել «Մշակի» խմբագրատուն:

1—1

ԹԻՖԼԻՍԻ ԳԱԼԱԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

արանով յայտնում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ Կովկասի պ. Կատարապետի կարգադրութեամբ, Թիֆլիսի քաղաքային խորհրդի ձայնաւորների առաջիկայ ընտրութիւնները կը կատարվեն երեք ընտրողական ժողովներում, որոնցից առաջինում կը մտնեն ոստիկանական 1, 2, 3 եւ 4 քաղաքամասերի ընտրողները, երկրորդում—5, 6 եւ 7 քաղաքամասերի ընտրողները, իսկ երրորդում—8, 9 եւ 10 քաղաքամասերի ընտրողները: Ձեռնամուկ լինելով ընտրողական ցուցակների կազմութեան, Գաղաքային Ուպրավան հրաւիրում է անշարժ կայքերի տէրերին մաքրել իրանց կալուածքները գնահատական տուրքի ապառիկներից, որոնք հաշւած են մինչեւ 1901 թ-ի յուլիսի 1-ը: Սրա հետ միասին յայտարարվում է, որ այն անձինք, որոնք անշարժ կայքեր կամ առեւտրական-արդիւնաբերական ձեռնարկութիւններ ունեն քաղաքի զանազան մասերում, բարեհաճեն առաջուց յայտնել Ուպրավային, թէ իրանք ընտրողական ժողովներից որին են կամենում մասնակցել ձայնաւորների ընտրութեան ժամանակ: (կ. չ.) 1—3

Մամուլի տակից դուրս եկաւ եւ վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում, ընտրի թղթի վրա, չեղ հրատարակութեամբ

Գ. ՍՈՆԵՂՈՒԿԵԱՆԻ

Պ Ե Պ Օ

Կոմէդիա երեք արար. երկր. տպագ. ուղղած. գինը 50 կ.:

Նոյն գրատունը վաճառվում են հեղինակի եւ հետեւեալ աշխատութիւնները—

«Գիշերվայ սարը խէր է», կատակ. մէկ տարրուածով. երկր. տպ. ուղղած, գ. 30 կ.:

«Օսկան Պետրովիչը էն կինը», կատ. 1 արար. գ. 30 կ.:

«Ամուսններ», կոմէդիա հինգ արար. երկր. տպագր. ուղղած. գ. 1 ր.:

Դիմել Թիֆլիս, в Центральной книжную торговлю. (կ.) 2—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Օր. Սարենիկ

ԹԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան ժամը 9—2

Ներկոյեան ժամը 5—7

Վանքի մեծ փողոց, տուն Մարտիրոսեանցի (հ. 4.) 12—60

Առամի եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների

ԲԺԻՇԿ Ն. ԿԱՃԿԱՃԵԱՆ

վերադարձաւ եւ ընդունում է հիւանդների երեւանեան հրապարակ, տուն Խարազեանի, «Ройновъ»-ի լուսանկարական գործարանի տակը:

Эриванская площадь, домъ Харазова. (հ. հ. չ. 4.) 9—10

Տնայնագործական Արդիւնաբերութեան Գործիչների

համագործող բացվում է հոկտեմբերի 9-ին, երեկոյան 7 1/2 ժամին, Կովկասեան գեղատեսիլ-սական ընկերութեան շինութեան մէջ: Տեղեկութիւններ կարելի է ստանալ ամենայն օր համագործողի բիւրօյի քարտուղար պ. Վ. Ա. Վասիլեից (Կատարապետի դիւանատանը) ժամի 11-ից մինչեւ 3-ը, եւ իշխանուհի Մ. Մ. Թումանեանից (Բարեաշխարհայա փող., սեփ. տուն), ժամի 6-ից մինչեւ 7-ը երեկոյան:

1—3

Ֆրանսիական Շոգեւաւային Ընկերութիւն

«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES».

13/26-ին Հոկտեմբերի մեկնելու է Բաթումից, երեկոյան ժամը 5-ին, BAGDAD շոգեւաւոր, հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս, Դարդանէլ, Դէլէադաճ, Սալօնիկ, Սիւրա, Պատրաս, Մարսէյլ, Հաւր եւ Լոնդոն:

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչեւ Պարիզ, Նոյնպէս եւ մինչեւ Շանգհայ (Չինաստանում), Վլադիվոստոկ գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով:

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին՝ հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել Ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալէրէյում, № 127 գրասենեակը, տեղեֆոն № 608: Գրասենեակը բաց է 9—1 ժամը ցերեկ. եւ 5—7-ը երեկոյան:

1—1

Խնորեւ ուշադրութիւն դարձեք

Ստացված է մեծ քանակութեամբ ամեն տեսակ պատրաստի սպիտակեղէն՝ կանանց եւ տղամարդկանց, ֆուֆայկաներ, չուլիկներ, նասկներ, ձեռնոցներ, մետաւի կլէօնկաներ սեղանի համար, նոյնպէս բաւթաներ, դայթաններ՝ սեփական գործարանում պատրաստված, կանանց գլխի սարքեր, այսինքն հաշիւներ, չիգիւներ, մետաքսէ աղլուխներ եւ այլն:

Թիֆլիսի բաժանմունք Բազում: Պարագետ:

Ե Ղ Բ. Մ Է Լ Ի Բ-Մ Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ց

Հաշապահութեան եւ գրասենեակային տեղեկութիւնների Կուրսեր

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ԿԻՑ

(Երկրորդ տարի)

Երկու տեղի գրապէս անձանց համար

Գործնական դասեր ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԼԵՉՈՒԻ Հասակաւորներին համար

Պարագետների սկիզբն է հոկտեմբերի 2-ին Մանրամասնութիւնները իմանալ Թիֆլիսի առեւտրական ուսումնարանում (Չուլուրէթ, սեփական տուն) ամենայն օր, ժամի 9-ից մինչեւ 2-ը, Կիրակի օրերը—ժամի 12—2:

10—12

Պ Ր Է Յ Ս - Կ Ո Ւ Ր Ա Ն Տ

Երկրագործական մեքենաների եւ գործիքների

որոնք պատրաստվում են Ի Ն Ժ Ե Ն Է Ր Պ Ա Ս Ս Է Կ Ի մեքենագործական եւ ձուլարանական գործարանում Բաթումում:

Ձինը՝ անուցիչով եւ կօնաէնէրով


25 սղորով	300 րուբլի
35 »	425 »
50 »	550 »
60 »	600 »
80 »	700 »
Թեղիչներ	50 »
Բաժանարարներ (սօրթիւրով)	70 »
Պրէններ խոտի եւ բամբակի համար	150 »
Գուլթաններ զանազան սիստեմների՝ մէկ պուլիս 5 ր. 50 կ.	

Վերոյիշեալ մեքենաների նմուշները ցուցադրված են Կովկասեան յօրեկանական ցուցահանդէսի մեքենաների եւ գործիքների բաժանմունքում, որտեղ եւ կարելի է նրանց տեսնել եւ փորձել:

Մի եւ նոյն ժամանակ հեշտ է համոզվել, որ նշանակած գները բոլորովին մատչելի են եւ որ այդ մեքենաները, որոնք պատրաստված են լաւ ապրանքից հմուտ կերպով եւ ամուր, նշանաւոր չափով էման են, ինչպէս ուսուց, այնպէս էլ արտասահմանեան գործարաններում պատրաստվածներին:

Երեւանի նահանգի համար ներկայացուցիչ նշանակված է Մեհաւեհ ԲԱՓԱՅԷԼ ՄԱՐԳԱՐԻԱՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ ԷՉՄԻՍԵՆԻ ԳԱՒԱՌԻ ՍԱՄԱՂԱՐԻ ԳԻՒԴԻՑ:

3—6



Կ օ լ թ է տ ի եւ Շ օ կ օ յ ա դ ի գ ո Ր Ժ ա Ր ա Ն

„Փ. Ն. ՓՐԻԴՈՆԵԱՆ“

ԹԻՖԼԻՍԻՄ

Առաջարկում է թարմ կարամէլ մրգեղէնից, մօնպանսէ, մարմէլադ, պաստիլա, գէֆիր եւ այլն:

Պատուէրներով դիմել գործարան. Պալլ-յօսկայա փողոց, սեփական տուն, տէլեֆօն № 362.

Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէյդանում, եղբ. Հէջուբեանների տանը, տէլեֆօն № 772.

Մեր ապրանքները ծախվում են բոլոր կօլօնիական խանութներում:

Բազուի եւ Բազուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Միքայէլեան փող., տ. Աշումեանի:

64—100